«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկ
"Environmental project implementation unit"
state institution
"Бюро по реализации экологических программ"
государственное учреждение

0005, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 65Ա3
65A3 Tigran Mets ave., Yerevan, 0005, Armenia
0005, пр. Тиграна Меца 65А3, Ереван, Армения
☎(+ 37410)651-631

http://www.epiu.am/
Էլ.փոստ /E-mail/ эл. почта info@cep.am

№ 1-06/27Ա/702

«13» դեկտեմբերի 2024թ.
«ԲԻ ԹՈՒ ՋԻ » ՍՊԸ-ի տնօրեն
Գնել Գրիգորյանին
Էլ հասցե՝ b2gllc.am@mail.com

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Գրիգորյան,

ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «ԲԻ ԹՈՒ ՋԻ » ՍՊԸ -ի միջև 2024 թվականի հուլիսի 8-ին կնքվել է N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-24/51-1 ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 400 300 /չորս հարյուր հազար երեք հարյուր/ ՀՀ դրամի չափով և 2024 թվականի հուլիսի 19-ին դրա անբաժանելի մաս կազմող N1 համաձայնագիր: Պայմանագրի կատարման ժամկետը ավարտվել է սույն թվականի օգոստոսի 23-ին: Պայմանագրում նախատեսված 1, 3, 7 չափաբաժինների մասով ապրանքը չի մատակարարվել: 2024 թվականի Ձեզ ուղարկվել է գրություն, որով Ձեզ առաջարկվում էր երկու օրվա ժամկետում մատակարարել ապրանքը, սակայն դա չի իրականացվել:

Համաձայն պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 կետերին Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը: Մասնավորապես՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

Scanned with CamScanner

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի

Հիմք ընդունելով վերոգրյալը «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը միակողմանի լուծում է Պայմանագիրը 1-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Միաժամանակ, հայտնում եմ, որ համաձայն ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-24/51 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի՝ նշված ժամկետում (10 աշխատանքային օրվա ընթացքում) Ձեր կողմից Հ/Հ 2500010969900200 հաշվին պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 40 030 (քառասուն հազար երեսուն) ՀՀ դրամի և 60 045 (վաթսուն հազար քառասունհինգ) ՀՀ դրամի չափով վճարելու, վճարման հանձնարարականների բնօրինակները ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ ներկայացնելու դեպքում, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության, «ԲԻ ԹՈՒ ՋԻ » ՍՊԸ -ը չի ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Արմեն Եսոյան

Կատարող՝
«ԲԾԻԳ» ՊՀ-ի գործերի կառավարման և
գնումների բաժնի պետ
Ժաննա Դադիյան
(+37410) 651-631

Scanned with CamScanner